ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1587 22.09.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ սույն թվականի սեպտեմբերի 19-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ արձանագրել էր մի շարք թերություններ.

1. Տեսակցության և քննչական սենյակները գտնվում էին փոշոտ վիճակում:
2. Զուգարանի ջրի ծորակը չէր փակվում և ջուրը անընդմեջ հոսում էր:

Ինչպես՝ նախորդ այցելության ընթացքում, այնպես էլ տվյալ այցելության ընթացքում արձանագրվել էր, որ զուգարանը և լոգարանը գտնվում էին կեղտոտ, հակահիգիենիկ վիճակում և խցերի լվացարանները նույնպես գտնվում էին կեղտոտ վիճակում:

Ցանկանում ենք փաստել, որ նախորդ Դիտորդական խմբի զրույցանը, մեկնաբանվել էր, որ թերությունները վերացվել են: Արդյունքում՝ կարելի է ասել, որ որոշ թերություններ ներկայիս պահին էլ կան, իսկ որոշները՝ կոնկրետ՝ 3-րդ և 4-րդ խցերը չշահագործվելով և միջոց չձեռնարկելով, մնացել են նույն վիճակում:

Դիտորդական խումբը մոնիթորինգի ընթացքում արձանագրեց, որ որոշ ձերբակալվածներ, խափանման միջոցի հարցը քննելու նպատակով, խցից դուրս են բերվում, տեղափոխվում են դատարան և այլևս հետ չեն վերադառնում: Համապատասխան գրանցամատյանում նշվում է, որ ազատ են արձակվել դատավորի որոշումով՝ դատարանի դահլիճից:

Դիտորդական խումբը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարանը տվյալ պարագայում քննում է, տվյալ անձի խափանման միջոցի հարցը, միայն կարող է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը ընդունել կամ չընդունել: Այդ իսկ պատճառով Դիտորդական խմբի այն հարցին, թե անձիք ում կողմից են ազատ արձակվել, վարչակազմի կողմից մեկնաբանվեց, որ քննիչի որոշման հիման վրա են ազատ արձակվել:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏՍԸ
ՄՏՊԳ № 4424
28_09 15

25 6396 09

Անհասկանալի է այն փաստը, որ անձիք ազատ են արձակվում վարույթն իրականացնող մարմնի կողմից, բայց գրանցամատյաններում գրվում է՝ դատարանի դահլիճից, դատավորի որոշման հիման վրա և ցանկացած դեպքում տվյալ անձը հետ չի վերադառնում ՀՊՎ:

Միաժամանակ խնդրում ենք ուսումնասիրել կից ներկայացվող լուսանկարը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հենց ՀՊՎ-ում ուսումնասիրել և տալ մեկնաբանություն, թե տեսակցության սենյակում ինչպես է հնարավոր ապահովել տեսակցությունը, երբ հնարավորություն չկա ո՛չ տեսնելու և ո՛չ էլ լսելու:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3456 <<13>> 10 2015թ.

Ձեր 22.09.2015թ. թիվ 2621/1587 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Արարատի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Նշված բոլոր թերություններն արդեն իսկ վերացվել են: Ինչ վերաբերվում է 3-րդ և 4-րդ խցերի վերանորոգման աշխատանքներին, ապա այդ կապակցությամբ 06.05.2015թ. թիվ 2/2-1-1440 գրությամբ արդեն իսկ տրվել են սպառիչ մեկնաբանություններ: Նշված հարցին լուծում տալու համար անհրաժեշտ են համապատասխան ֆինանսական միջոցներ, որի ուղղությամբ կատարվում են աշխատանքներ:

Ձերբակալված անձինք վարույթն իրականացնող մարմնի կողմից երբ տեղափոխվում են դատարան խափանման միջոցը քննության առնելու նպատակով, որոշ դեպքերում անձինք դատարանի որոշումով ազատ են արձակվում դատարանի դահլիճից և նման

դեպքերում վերջիններս ՁՊՎ չեն վերադարձվում, իսկ այն դեպքերում, երբ դատարանի կողմից վարույթն իրականացնող մարմնի, կալանքը որպես խափանման միջոց, միջնորդությունը չի բավարարվում և որոշման մեջ չի նշվում ազատ արձակել դատարանի դահլիճից՝ ՁՊՎ-ից ազատ են արձակում վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացրած որոշման հիման վրա: Հարկ է նշել որ ձերբակալվածներին դատարան տեղափոխելուց հետո երբ դատարանի որոշումով ազատ են արձակվում դատարանի դահլիճից, ոստիկանությունը որևէ լիազորություն չունի նրանց վերադարձնել ՁՊՎ, հակառակ դեպքում դա կդիտվի որպես անձի սահմանադրական իրավունքի խախտում:

ՁՊՎ-ի տեսակցության սենյակում տեղադրված թափանցիկ պատնեշը նորոգվել է և համապատասխանեցվել ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի>> 119-րդ կետի պահանջներին:

ՀՀ ոստիկանության շտաբ